ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԵՐՋԱՆՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ ՀԱՅԿԻ

ԿՅԱՆՔԻ ԵՎ ՄԱՀՎԱՆ ԽՆԴԻՐԸ ՆԱՐ-ԴՈՍԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Ժ. 01.01 - «ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ
ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2019

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝ **Մակարյան Ալբերտ Արշավիրի**
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ **Սաֆարյան Վազգեն Հմայակի**
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մնացականյան Եվա Ժորայի
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Առաջատար կազմակերպություն՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2020թ. հունվարի 22-ին՝ ժամը 14[30]-ին, ԵՊՀ-ում գործող՝ ՀՀ ԲՈԿ-ի գրականագիտության 012 մասնագիտական խորհրդի նիստում: Հասցեն՝ ք. Երևան, 0025, Աբովյան 52[ա], ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, 202 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2019 թվականի նոյեմբերի 29-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Ներկա օրերում Նար-Դոսն իր ստեղծագործության կենսունակ տարերքի ընդգրկումով գրեթե դուրս է մղվել լրջմիտ ուսումնասիրությունների տիրույթից: Զարմանք է հարուցում այն իրողությունը, որ հայ քննադատական ռեալիզմի հոգեբանական ուղղության նշանավոր այս ներկայացուցիչը 21-րդ դարում հայտնվել է ստվերում: Երևույթ, որն արդարացի չէ և ոչ մի առումով: Վերջին տարիներին ժամանակակից աշխարհում և հատկապես Հայաստանի Հանրապետությունում զգալիորեն աճել է հուսալքվածների և անձնասպանների թիվը, ուստի Նար-Դոսի երկերում առկա կյանքի և մահվան խնդիրը դառնում է խիստ արդիական: Աննա Սարոյանը (համանուն նամակագրական վիպակի հերոսուհին), Մանեն («Պայքար»), Շահյանը («Մահը») ինքնասպանություն գործեցին, բայց կյանքի վատորակ և մարդատյաց օրենքներն ու սահմանված նորմերը գործում են նաև այսօր: Այս իմաստով Նար-Դոսի երկերը մեր օրերում ունեն արդիական հնչեղություն և կենսական հարցադրումներ: Ժամանակակից մարդը խուճապահար է լինում ամեն մի չնչին իրողությունից և հուսահատ դրությունից դուրս գալու ելքը կարծես գտնում է ինքնասպանության մեջ: **Այդ իսկ պատճառով ունենք համահայկական մշակութային արժանապատվության վերադարձի հրամայական-պահանջ, որի առաջնահերթությունը առաջադրված հիմնախնդրի քննությունն է սույն ուսումնասիրության մեջ:**

Մարդկանց նյութապաշտության, ինչպես նաև անհավասար շահերի մշտատև պայքարի ընթացքում Նար-Դոսի գրականությունը որոնելու ենք որպես ինքնամաքրումի հայելի: Ժամանակակից մարդն ավելի, քան երբևէ, ունի Նար-Դոսի գրականության կարիքը: Կանգնած լինելով հայ հանրային-քաղաքական կյանքի անցումային շեմին՝ Նար-Դոսը շոշափում է կենսունակ այնպիսի հարցեր, որոնք արդիական նշանակություն ունեն նաև այսօր: Ցավոք, մեր օրերում ևս պակաս չեն «Մեր թաղը» նորավիպաշարում պատկերված մարդատյաց, բռի, անսիրտ, կոպիտ բարքերը և վերաբերմունքը մարդկանց նկատմամբ: Նրա երկերը հագեցած են մարդկային կյանքի շրջադարձերով, գաղափարագեղարվեստական և բարոյահոգեբանական հետաքրքիր հարցադրումներով, որոնք արդիական են նաև այսօր*:

Հետազոտության նպատակներն ու խնդիրները: Առաջադրված հիմնահարցի նպատակն է Նար-Դոսի երկերն ուսումնասիրել հին հունական, 19-20-րդ դարերի ավստրո-գերմանական փիլիսոփայության ու բարոյահոգեբանության համապատկերում, վեր հանել կյանքի, մահվան խորհրդի գեղարվեստական դրսևորումները, նյութը փաստարկել հստակ օրինակներով («Մեր թաղը»,

---

* Ներկա օրերում «Սպանված աղավնին» գրավում է ոչ միայն գրականագետների, այլև ֆիլմարտադրողների ուշադրությունը. 2009թ. «Երևան» ստուդիան էկրանավորեց այն, որը ջերմորեն ընդունվեց արվեստասեր հասարակության կողմից:

«Սպանված աղավնին», «Աննա Սարոյան», «Պայքար», «Մահը») և ուսումնասիրության արդյունքները հիմք դարձնել խնդրո առարկայի համակողմանի բացահայտման համար: Նար-Դոսը համընդհանուր ողբասացության չի վերածում իր երկերը: Նա կյանքն ու մահը դիտարկում է միևնույն հարթության վրա: Այս իմաստով ուսումնասիրության հիմնախնդիրները վերաբերում են կյանք-մահ հարաբերակցության մեջ հստակորեն ընդգծված ***կենսականությանը***:

Ատենախոսության գիտական նորույթը: Ստեղծագործական միտքը, մշտապես նորոգվելով, ժամանակի ընթացքում ի հայտ է բերում կենսական հիմնահարցերի վերարժևորման և արդիականացման նոր չափանիշներ: **Բնավ չստվերելով նարդոսագիտության ձեռքբերումները[1] և չհավակնելով սպառիչ խոսք ասել հեղինակի՝ միշտ արդիական երկերի մասին՝ ներկա ատենախոսության մեջ փորձել ենք Նար-Դոսի երկերը դիտարկել, վերլուծել և վերարժևորել կյանքի ու մահվան փիլիսոփայության հայեցակարգով՝ այնքան հարազատ մեր ժամանակներին, ինչն էլ ապահովում է այս աշխատանքի գիտական նորույթը**: Էպիկուրի, Պլատոնի, Արթուր Շոպենհաուերի, Ֆրիդրիխ Նիցշեի, Օսվալդ Շպենգլերի փիլիսոփայական տեսությունների ընդհանուր համապատկերում ուրվագծվել են կյանքի և մահվան նարդոսյան ընկալումների նախահիմքերը: Անդրադառնալով Զիգմունդ Ֆրոյդի, Ռորերտ Ստերնբերգի դարակազմիկ հայեցակարգերին՝ դրանք զուգահեռել ենք հայ արձակագրի աշխարընկալմանը և գտել դրանց՝ առաջին հայացքից հակասական, բայց ներքուստ պատճառահետևանքային կապ ունեցող ընդհանուր աղերսները: Նար-Դոսը գիտականորեն չի տիրապետել հոգեվերլուծությանը, բայց իր ստեղծագործական ներքնատեսությամբ կարողացել է հստակորեն վերլուծել մարդու ներաշխարհն ու բնավորության դրսևորման կերպերը:

Առաջադրված խնդիրների լուսաբանման համար անդրադարձել ենք նաև Երևանի՝ Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում պահվող արխիվային նյութերին[2], ինչպես նաև զրուցել ենք Նար-Դոսի ծոռան՝ Միքայելի հետ: Վերլուծության այս մոտեցումը նորություն է նարդոսագիտության

---

[1] Տե՛ս **Տէրտէրեան Ա.,** Նար-Դոսի ստեղծագործութիւնը, Գրական-քննադատական ուսումնասիրութիւն, Թիֆլիզ, տպ. Ա. Մ. Կերեսելիձէի, 1913, 73 էջ: Այս գիրքն ունի նաև երևանյան վերահրատարակություն: Տե՛ս **Տերտերյան Ա.,** Երկեր, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1980, 492 էջ: Տե՛ս **Հովհաննիսյան Գ.,** Նար-Դոս, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1959, 203 էջ: Տե՛ս **Հարությունյան Տ.,** Նար-Դոսի «Մահը» վեպը, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1961, 176 էջ: Տե՛ս **Հովսեփյան Գ.,** Նար-Դոս, Երևան, Հայպետհրատ, 1961, 484 էջ: Տե՛ս **Թոփչյան Ստ.,** Կերպ և իսկություն, Երևան, Սովետ. գրող, 1987, 488 էջ: Տե՛ս **Սաֆարյան Վ.,** Գրողի և կերպարի անհատականությունը (Մուրացան. Նար-Դոս), Երևան, Մակմիլան- Արմենիա, 2001, 240 էջ: Տե՛ս **Սարինյան Ս.,** Փիլիսոփայական հոսքը Նար-Դոսի գեղարվեստում // «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 2008, թիվ 2, էջ 10-38:

[2] **Երևանի՝ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան**, Նար-Դոսի ֆոնդ, թիվ 3, 4, 5, 6, 9, 10, 11, 12, 13:

ասպարեզում, որովհետև նախորդ ուսումնասիրողները հպանցիկ են ներկայացրել խնդրո առարկան:

Աշխատանքի մեթոդաբանությունը: Հետազոտությունը իրականացվել է տրամաբանական և ժամանակահաղորդ դիտարկումների միասնական գիտակցմամբ: Պատմահամեմատական, վերլուծական և համադրական մեթոդների կիրառությամբ այս աշխատանքում բացահայտելով Նար-Դոսի երկերի բարոյահոգեբանական և կենսափիլիսոփայական համապատկերը՝ նկատել ենք, որ 19-20-րդ դարերի փիլիսոփայական միտքը, իր ուրույն դրսևորումն ստանալով Նարդոսյան ստեղծագործության մեջ, կարևոր նշանակություն ունի այդ երկերի մերօրյա ընկալումներում: Աշխատանքի մեթոդաբանությունը ուշագրավ է բազմաժանր և փիլիսոփայական հայեցակարգը որոշարկող հնարավորինս շատ ստեղծագործությունների ընդգրկմամբ: Այդ երկերն ուսումնասիրվել են նաև գրական ազգակցության տեսանկյունով: Բացահայտվել են ինչպես համաշխարհային և հայ գրականության այն ավանդները, որոնք ազդել են Նար-Դոսի գեղարվեստական հակումների ձևավորման վրա, այնպես էլ վերջիններիս գրական հետագա ներթափանցումները գրամշակութային բոլորովին այլ իրականություն:

Ատենախոսության կառուցվածքը և համառոտ բովանդակությունը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, գրականության ցանկից, որտեղ նշված են օգտագործված աղբյուրները, պարբերականները և արխիվները:

Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 145 էջ:

Ներածության մեջ ներկայացրել ենք գրապատմական այն ժամանակաշրջանը, որի ընթացքում գրական ասպարեզ մուտք գործեց Նար-Դոսը: Արժևորելով նյութը մեզանից առաջ ուսումնասիրած գրեթե բոլոր նախորդներին՝ հակիրճ շարադրել ենք հարցի պատմությունը և ընդգծել ատենախոսության գիտական նորույթը: Հետազոտության նպատակների ու խնդիրների պարզաբանմամբ հիմնավորվել է ատենախոսության արդիականությունը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԿՅԱՆՔԻ ԵՎ ՄԱՀՎԱՆ ՆԱՐԴՈՍՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ «ՄԵՐ ԹԱՂԸ» ՆՈՐԱՎԻՊԱՇԱՐՈՒՄ

1.1. ԿՅԱՆՔԻ ՈՒ ՄԱՀՎԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ՆԱՐ-ԴՈՍԻ «ԻՆՉՊԵՍ ԲԺՇԿԵՑԻՆ» ԵՎ «ՍԱՔՈՒԼՆ ՈՒԽՏ ԳՆԱՑ» ՆՈՐԱՎԵՊԵՐՈՒՄ

Ատենախոսության առաջին գլխի այս ենթաբաժնում շոպենհաուերյան փիլիսոփայության համապատկերում շեշտադրել ենք կյանքի և մահվան նար-

դոսյան ընկալումների առանձնահատկությունները: Շոպենհաուերի համոզմամբ՝ մարդն իր բնույթով ոչ թե բանական, այլ անբանական էակ է. *«Աշխարհն իմ պատկերացումն է»*[3],- եզրակացնում է փիլիսոփան:

Անցումային դարաշրջանում Նար-Դոսը հին ու նոր կացութաձևերի, ինչպես նաև ներաշխարհի և արտաշխարհի բախումների հիմքի վրա ցույց է տալիս ձևավորվող մարդկային հուզաշխարհն ու բարոյականությունը: Հոգեկերտվածքների ամփոփ գեղարվեստականացմամբ արձակագիրն իր ծննդավայրի ընդհանուր համայնապատկերից առանձնացնում է անհեռանկար ու օտարված մարդկանց մի տեսակ, որը սոցիալական կյանքի դժնդակ պայմանների և տարիների ընթացքում ձևավորվող թույլ բնավորության հետևանքով դուրս է ընկել կյանքի բնականոն զարգացման ուղեծրից ու անվերջ խարխափում է սնոտիապաշտության և անգիտության շրջապտույտում: *«...Սոցիալական ու հոգեբանական նկարագրի շատ եզրեր հաստատում են նրա անկումայնությունն ու անհեռանկարայնությունը»*[4],- նկատում է պրոֆ. Վ. Սաֆարյանը:

Մարթային գիտակցված տգիտությամբ *«բժշկելու»* ամբողջ ընթացքը նորավեպի ողբերգական առանցքն է: Միայն *«թաբախ ման ածող Ցականի»* ներկայությունից է, որ խառնամբոխն իրար անցած փորձում է ազատել *«կալուկապ»* եղած Մարթային: Ճիշտ է, ժամանակը բուժում է աղջկա՝ *«մաթրախի խարաններ-ը»*, սակայն ամիսներ անց նա մահանում է *«նույն խելագար դրության մեջ»*: Սարսափելին այն է, որ Մարթայի մահով ոչինչ չի փոխվում խավարամիտ և հնամենի սովորություններով ապրող մարդկանց միջավայրում: Նրանք շարունակում են հավատալ սուրբ աղոթքների քողի տակ թաքնված գրպանահատությանը:

Հին բարի ավանդույթների աղավաղման և խաթարման կենտրոնում է հայտնվել նաև Նար-Դոսի «Սաքուլն ուխտ գնաց» նորավեպի հերոսը: Հեղինակին հետաքրքրում էր շատ կարևոր մի հարց՝ մարդու հոգեկերտվածքը որքանո՞վ կարող է դիմակայել հասարակության պարտադրած սնոտիապաշտ հարաբերություններին, որոնք իրենց ճանապարհին ավերում են ամեն ինչ:

«Բացանողի» խորհրդով Սուրբ Գևորգ հասած ուխտավորների սպասելիքները մնում են անկատար: Սաքուլին չի օգնում *«խաչի»* զորությունը. երկու օր ու գիշեր հորդառատ անձրևն ավելի է քայքայում Սաքուլի՝ առանց այն էլ հյուծված առողջությունը:

Մարդկանց խեղճության և միամտության վրա սկսում են ինքահաստատվել մի փոքր բարձրում կանգնածները, այս դեպքում՝ Սերգեյ Ստեփանիչը: Վերջինս, իհարկե, գրբաց Գրիգոր («Ինչպես բժշկեցին») չէ: Ի տարբերություն նախորդ նորավեպի՝ այստեղ այդքան էլ բացասական գծերով չի ժխտվում ժամանակի հարուստ և ուրիշներին օգնել ցանկացող մարդկանց տեսակը:

---

[3] Տե՛ս **Шопенгауэр А.,** Мир как воля и преставление, Классическая философская мысль, Минск, Современный литератр, 1999, стр. 78.

[4] **Սաֆարյան Վ.,** նշվ. աշխ., էջ 190:

Կյանքը շարունակվում է իր բնականոն հունով: Այս ամբողջ ողբերգական համանվագի մեջ Նար-Դոսը չի մոռանում սկզբում թթավաճառի, ապա Սաքուլի հնգամյա աղջկա միջոցով հնչեցնել և նոտագրել կյանքի շարունակության ազդակները:

1.2. ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՆԿՄԱՆ ՆԱՐԴՈՍՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ («ՀՈՊՈՊ», «ԹԵ Ի՞ՆՉ ԵՂԱՎ ՀԵՏՈ...», «ԱԴԱՄԱՄՈՒԹԻՆ»)

Այս ենթագլխում նոր տեսանկյունից ուսումնասիրել ու արժևորել ենք Նար-Դոսի խնդրո առարկա նորավեպերը: Ուշարժան է, որ հեղինակը հիշյալ նորավեպերում դիտարկում է բարոյահոգեբանական տարաբնույթ երևույթներ, ուր առանցքային է բարոյական անկման գաղափարը: Ուսումնասիրության ընթացքում նկատվել է, որ արձակագիրը սոցիալական կյանքի անբարենպաստ պայմանների ներկայացման միջոցով ուղղակիորեն մատնանշում է մարդու բարոյականության ողբերգական անկումները, որոնք իսպառ կամ գրեթե դուրս են արտաքին գործոնների ազդեցությունների դաշտից:

Արագընթաց ժամանակների հեղինակը «Հոպոպ» նորավեպում դիտարկում է մարդկային այն բարոյականությունը, որը դուրս է մարդու հասարակական դիրքի և սոցիալական բախումների տիրույթից: Ասել է թե՝ անկախ սոցիումից, ունեցվածքի տեսակից, քանակից և ձեռք բերելու ճանապարհից՝ մարդը մի տեսակ է, որը կա՛մ մարդկային է, կա՛մ՝ ո՛չ:

Ասատուրը ողբերգական կերպար է, որովհետև նրա բնատուր կոպիտ, անհարմարվող ու անմարդկային բնավորությանն ավելանում են մարդու ձեռքով ստեղծված հարաբերություններն ու օրենքները, որոնք մարդուն իսպառ զրկում են բանականությունից: Նրա բնավորության մեջ խոր արմատներ են ձգել մարդու հետ աշխարհ եկած հոգսն ու դրան դիմակայելու կարողությունը:

Նար-Դոսին հատուկ է պատկերավոր մտածողությունը: Քչերին է հաջողվում գեղարվեստական երկին հաղորդել շարժանկարային զգացողություն: Այս առումով եզակի է Ասատուրի՝ կնոջ հետևից վազելու պատկերը: Թաղի բնակիչները հոմերական անզուսպ քրքիջով ավելի են լարում Հոպոպի՝ առանց այդ էլ պրկված նյարդերը: Շնորհիվ այս պատկերի՝ նորավեպի սրընթացությունը մնում է լարվածության ու հանկարծակի ավարտի տիրույթում:

Թաղի համար *«սովորական»* դարձած նմանօրինակ վերջին տեսարանն ունենում է անսպասելի և ողբերգական ավարտ: Կինը հանդգնում է կոտրել ամուսնու՝ թվացյալ հաջողության միակ գրավականը՝ կարմիր գավը: Գինին *«լերդացած արյան սև գույնով»* է ներկում գետինը: Եզակի այս պատկերով Նար-Դոսն ընթերցողին նախապատրաստում է եզրափակիչ ողբերգությանը՝ ակնարկելով, որ շուտով արյուն է թափվելու*:

---

* Ի դեպ, թափված գինու՝ որպես նախապատրաստվող սպանության խորհրդանիշի, պատկերի ենք հանդիպում նաև անգլիացի նշանավոր դրամատուրգ և ռեժիսոր Ռոբերտ Բոլտի

Սոցիալ-հոգեբանական ընդգրկումները սարսափելի պատկերների են հասնում «Թե ի՞նչ եղավ հետո, երբ շաքարամանից երկու կտոր շաքար պակասեց» նորավեպում: Ինչպես նախորդ նորավեպում, այստեղ ևս Նար-Դոսը, հարազատ մնալով իր ընկալումներին և մոտեցումներին, ոտղակիորեն խոսում է մարդկային այն բնազդի մասին, որի հետ քիչ առնչություն ունեն արտաքին հանգամանքները, կարիքը և հոգսը: Գորշ կյանքի այս համապատկերում են ներկայացված դրոգապան Յագորն ու իր կինը՝ Անանը: Եթե առաջինը ժամանակի կոպիտ ու բռի բարքերի կրողն է, ապա երկրորդը ներկայանում է մարդկային խորը տառապանքով և դրանից ծնվող խուլ հառաչանքներով: Այստեղ ևս բռնության զոհը կինն է: Հազիվ քսան տարեկան Անանը փորձում է գտնել իր ներկա թշվառության պատճառները:

Յագորը կատարյալ չարիք է իր կնոջ և ընտանիքի համար: Անանի կյանքը երկու կտոր շաքարի նման հալվում է ամուսնու և նրա մոր՝ գիժ Հոռոմսիմի հետ մի հարկի տակ ապրելու ընթացքում: Նար-Դոսը շաքարի և մարդկային կյանքի զուգակշռում ցավով նկատում է, որ առաջինը քաղցրության փոխարեն դառնություն է բերում և արժենում է մի կնոջ կյանք: Սարսափելի սպանությունից հետո պակաս կարևոր է դառնում այն, թե ինչ է սպասվում Յագորին. հեղինակը չի էլ խորանում՝ իրավական մակարդակում պատժվո՞ւմ է դրոգապանը, թե՞ ո՛չ: Նար-Դոսին ավելի շատ հետաքրքրում էր երևույթի բարոյական կողմը՝ ո՞վ է մարդը, ի՞նչ բնազդներ ունի նա, և, որ կարևոր չէ, ինչպե՞ս է նա ընկալում մահը: Անանը մահանում է Յագորի՝ *«երկաթից ծուլված»* բռունցքի հարվածից, իսկ տղամարդու մեջ մնում են ոչ թե ցավն ու ափսոսանքը, այլ բթացած բնազդի հասնող անտարբերությունը:

Մարդկային առումով շատ ողբերգական, բայց գեղարվեստական տեսանկյունից մի կատարելություն է «Ադամամութին» նորավեպը: Նկատելի է, որ այստեղ հեղինակը քննության է ենթարկում սոցիալական կյանքի ճնշիչ ազդեցությանը մի կերպ դիմակայող մարդու հոգեբանության դրսևորման կերպերը:

Նորավիպագրին հետաքրքրում են ոչ այնքան սոցիալական կյանքն իր աղետալի կողմերով, որքան դրանցում արտահայտվող մարդկային վարքագիծն ու բարոյականությունը: Ընտանիքի մայրը՝ Շուշանը, երկունքի մեջ էր. լույս աշխարհ էր բերելու հինգերորդ զավակին, բայց նրա մտքում շարունակ ծագում էին մեկը մյուսի հետ փոխկապակցված հարցեր:

Այս համատարած թշվառությունն աննախադեպ վերջաբան է ունենում. ադամամութին Շուշանը խեղդամահ է անում իր նորածին երեխային՝ վստահ լինելով, որ այս մեկի մահը կարող էր փրկել մնացած երեքի կյանքը:

(1924-1995)՝ Ջորջ Բայրոնի կենսագրության մի շրջանին նվիրված՝ «Լեդի Կառոլինա Լեմ» հանրահայտ ֆիլմում (1972):

1.3. ԲԱՐՈՅԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՆԿՄԱՆ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ՀՈԳՈՒՆ ՎՐԱ ՀԱՍԱՎ» ԵՎ «ՍԵՎ ՓՈՂԵՐԻ ՏՈԿՈՍԸ» ՆՈՐԱՎԵՊԵՐՈՒՄ

Երրորդ ենթագլխում խնդրո առարկա նորավեպերի առանցքային պլանում դիտարկել ենք բարոյահոգեբանական անկման ընդհանրությունները, որոնց ուսումնասիրության ընթացքում նկատել ենք, որ գիտական որոշակի ոճավորմամբ իրարից տարբեր այդ իրողությունների հիմքում հեղինակն ընդհանրացնում է մարդկային վարքագծի՝ բարոյականությամբ պայմանավորված տարաբևեռ կողմերը:

Սոցիումի բերած դժվարությունների հետևանքով հոգսաշատ առօրյայի է վերածվել նախշքար Դավթի («Հոգուն վրա հասավ») և Արտեմի («Սև փողերի տոկոսը») կյանքը: Վերջիններիս համար նույնիմաստ ինչեղություն ունեն հոգսի և պարտականության ընկալումները, մինչդեռ դրանք հստակորեն տարորոշված ըմբռնումներ են:

«Հոգուն վրա հասավ» նորավեպում Նար-Դոսը նկատում է, որ մարդը, կորցնելով իր բարոյահոգեբանական որակները, վերածվում է բնազդով առաջնորդվող գազանի: Նախշքար Դավթի ընտանիքը հազիվ է դիմակայում հոգսաշատ առօրյայի բեռան տակ: Կողոպտվել է ընտանիքի հոր ներաշխարհը. նա տանը դարձել է բռնակալ, իսկ դրսում՝ խեղճուկրակ հարբեցող:

«Սև փողերի տոկոսը» նորավեպում նույնպես նկատելի է անհեռանկար մարդու նորավիպաշարային դասական օրինակը: Խաղամոլ և հարբեցող Արտեմը վերահաս չարիք է դարձել իր ծեր մոր՝ Մարանի համար: Այս նորավեպում բարոյահոգեբանական որակները քննվում են հակադրամիասնության սկզբունքով: Պառավ Մարանը մայրական բնազդով սիրում է ոչ միայն իր որդուն, որը վաղուց արդեն մոռացել էր որդիական սիրո և պարտականության մասին, այլև իր *«երկու հատիկ»* հավերին, որոնք նրա օրվա ապրուստի միակ աղբյուրն ու հույսն էին: Մարանի՝ հավերին նվիրված լինելու հանգամանքն այս նորավեպում պատահական չէ. Նար-Դոսը նրբորեն ցույց է տալիս կնոջ հոգեբանության նախաստեղծ, անխառն ու անխաթար մաքրությունը[5]: Եթե Մարանի ամբողջ բաղադրությունը, վերածվելով մեկ էության, դառնում է իր և հավերի ընդհանրությունը, ապա որդին՝ Արտեմը, դեգերում է խաղամոլության, հարբեցողության, իսկ վերջում արդեն ծեր մորը լկտիաբար կողոպտելու գիտակցության տիրույթներում:

---

[5] Նորավիպագրության տիպաբանական համապատկերում այսպիսի երևույթ է նկատվում նաև Համաստեղի «Տափան Մարգար» նորավեպում: Այս մասին ավելի մանրամասն տե՛ս **Մերջանեան Տ.** «Արարմամբ յաւերժանալու խորհուրդը Համաստեղի «Տափան Մարգար» նորավէպում», **«Սիոն»**, եռամսեայ պաշտօնաթերթ, Երուսաղէմ, 2017, ապրիլ-մայիս-յունիս, էջ 40-42:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՍԵՐԸ ԿՅԱՆՔԻ ԵՎ ՄԱՀՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԾՈՒՄ

ՍԻՐՈ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՆԱՐ-ԴՈՍԻ «ՍՊԱՆՎԱԾ ԱՂԱՎՆԻՆ» ՎԻՊԱԿՈՒՄ

Ատենախոսության երկրորդ գլխում 19-20-րդ դարերի փիլիսոփայության (Արթուր Շոպենհաուեր[6]) և հոգեբանության (Զիգմունդ Ֆրոյդ[7], Կարլ Գուստավ Յունգ, Ռոբերտ Ստերնբերգ[8]) նվաճումների համապատկերում ներկայացրել ենք «Սպանված աղավնին» վիպակը:

Արձակագրի դիտողունակ աչքից չի վրիպել այն, որ անցումային դարաշրջանի մարդը ծեռք է բերում բարոյական մեկ այլ նկարագիր, որը, ինչպես բոլոր ժամանակներում, ավելի շատ տեսանելի է կին-տղամարդ փոխհարաբերության, ինչպես նաև սիրո և հաճույքի ընկալումներում: Ակներև է, որ հեղինակի այս ստեղծագործության գլխավոր հերոսներից մեկի՝ Ռուբեն Թուսյանի աշխարհընկալման սկզբունքները բխում են փիլիսոփայական որոշակի հավատամքից: Հեղինակը կերպարաստեղծման ընթացքում նրբորեն ընդգծում է Թուսյանի՝ արտաքին կաղապարի տակ թաքնված անհատականության ինչպես բացասական, այնպես էլ դրական կողմերը: Թուսյանը չունի բարձր զգացմունքներ և ամեն կերպ փորձում է արդարացնել իր տմարդի արարքներն ու դատողությունները: Նա, խոսելով մի հանգամանքի մասին, մտքում հաստատում է մեկ այլ իրողություն և դրանով իսկ օտարվում իրեն շրջապատող միջավայրից: Բարոյական որակների արժևորման հարցում Նար-Դոսն առաջնային տեղ է հատկացնում ինքնագիտակցմանը, բնատուր հոգեկերտվածքի և անպաճույճ վարքագծի դրսևորման կերպերին: Ի տարբերություն շատերի, ովքեր իրենց հաճույքները քողարկում են հասարակության կողմից ընդունված բարոյական չափանիշներով, Թուսյանն իր հակումներում դրսևորում է բացարձակ անկեղծություն և համարձակություն: Չնայած փիլիսոփայությունն առհասարակ մերժելի է Թուսյանի համար, այդուհանդերձ նա կյանքի ընկալման սահմաններում որդեգրել է իր բնավորությանն ու վարքագծին բնորոշ մի *«փիլիսոփայություն»*, որը միտումնավոր վերա-

---

[6] Տե՛ս **Шопенгауэр А.,** Мир как воля и представление, Пер. с нем. Ю. Айхенвальд, Ф. Черниговец, Р. Кресин, Минск, Современный литератр, 1999, 1408 с.

[7] Տե՛ս **Фрейд З.,** Я и оно, Труды разных лет, в 2 кн., кн.1, Тбилиси, 1991, 400 с.

[8] Տե՛ս **Sternberg R.,** A Triangular Theory of Love // H. T. Reis/C. E. Rusbult eds., Close Relationships 2004, 652 p.

գրվում է Էպիկուրին: Մինչդեռ Էպիկուրը, ավելի շատ մտածելով ակնկալվող հետևանքների դառնության մասին, կարևորում էր հաճույքի տևականությունը ոչ այնքան ներկայում, որքան ապագայում[9]:

Հաճելի ժամանցից հետո Թուսյանը, հավատարմության խոստումներ շռայլելով Սառային, մեկնում է Պետերբուրգ: Տարածաժամանակային հեռավորության և մեծ քաղաքի արագընթաց կյանքի բովում Թուսյանը մոռանում է երբեմնի տված խոստումները: Առաջին հրապուրանքը Սառային նետում է ճակատագրի քմահաճ ընթացքի մեջ, և կնոջ հուզաշխարհում սկսում է ձևավորվել վրեժխնդրության մոլեգին ցանկությունը:

Թուսյանի կերպարին հակադրվում է կանացի արժանապատվության զգացումով և վրեժխնդրության կրքով հատկանշվող Սառայի կերպարը: Նրա անբարեհամբույր, կոպիտ, անհավասարակշիռ ու անտարբեր վերաբերմունքը դիպաշարի զարգացման ընթացքում պատճառաբանվում է իր և Թուսյանի միջև ծնված սիրավեպի անսպասելի ավարտով, անտառի պատահարով, ինչպես նաև հղիությամբ և ծննդաբերությունից որոշ ժամանակ անց կատարած մանկասպանությամբ, որը դառնում է Սառայի բարոյական անկման նախասկիզբը:

Չնայած Սառան ամուսնացել էր Գարեգին Սիսակյանի հետ, բայց, միևնույն է, չէր կարողանում սիրել *«փարօրինակ ուղեղի փեր երիտասարդին»*: Կինը հակառակ սեռի մեջ առաջին հերթին փնտրում է նրա սեռային դիմագիծն ամբողջացնող գծերը, իսկ Գարեգինը բնավ այդպիսին չէ. ունի բանաստեղծական նուրբ հոգի: Գենետիկորեն ներքին բարեկրթություն ունեցող Գարեգինը *«առասպելական թույլ կամքի և հեզահամբույր բնավորության»* պատճառով շարունակ տառապում է իր խղճի և խեղճության միջակայքում:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԱՆՁՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ՆԱՐ-ԴՈՍԻ ԵՐԿԵՐՈՒՄ

3.1. ԱՆՁՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒՄԸ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՆՑՈՒՄՆԵՐԸ ՆԱՐ-ԴՈՍԻ «ԱՆՆԱ ՍԱՐՈՅԱՆ» ՆԱՄԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԻՊԱԿՈՒՄ

Երրորդ գլխի առաջին ենթագլխում ներկայացրել ենք Նար-Դոսի «Աննա Սարոյան» նամակագրական վիպակը, որը տեսանելի է 19-20-րդ դարերի անցումային ժամանակաշրջանի սոցիալ-պատմական կյանքի լուրջ տեղաշարժերի, ինչպես նաև համաշխարհային փիլիսոփայական մտքի նվաճումների համապատկերում:

---

[9] Տե՛ս **Лаэртский Д.**, О жизни, учениях и изречениях знаменитых философов, Москва, «Мысль», 1979, 620 с.

Գրող-հոգեբանը կերպարների ու միջավայրի համատեղմամբ կարողանում է ամենաբազմազան կողմերից դիտարկել մարդու, տվյալ դեպքում՝ կնոջ հուզաշխարհում ձևավորվող անկումային տրամադրություններն ու զարգացող ողբերգությունը: Աննայի հոգեկերտվածքային տեղաշարժերն սկսվել էին մինչև կենսական պայմանների փոփոխությունները: Սա բնավ մերկապարանոց հայտարարություն չէ, այլ հերոսուհու ինքնախոստովանությունն է հենց առաջին նամակում: Ողբերգական այս նախերգանքի մեջ արդեն իսկ ուրվագծվում են բոլոր այն աղոտ խոհերն ու մտածումները, որոնք իրենց հետագա զարգացման մեջ ոչնչացնելու էին խուճապահար և հուսահատված հերոսուհուն:

Նրա հոգեբանության մեջ հետզհետե ակոսվում են ավելի գորշ և մռայլ երանգներ, որոնք հաստատում են այն վաղեմի ճշմարտությունը, որ ոչ թե ժամանակն ու տարիքն են որոշում մարդու կենսունակությունը, այլ հոգեբանությունը: Նար-Դոսը քայլ առ քայլ լուսաբանում է Աննայի հոգեբանության անհասկանալի և մութ կողմերը: Նրա տարիքը վաղուց արդեն անէացել է հուզաշխարհի բազմանշանակ երևույթների բովում:

Ճիշտ է, Աննայի հոգեկերտվածքը սկսել էր փոխակերպվել մինչև կենսական պայմանների փոփոխությունները, սակայն Նար-Դոսն ընդգծված երանգներով ցույց է տալիս, որ սոցիումից ստացված ազդեցությունները ևս ներգործում են հերոսուհու (և առհասարակ՝ մարդու) հոգեվիճակի վրա: Հեղինակը նկատում է, որ մարդկային հոգեբանությունը դուրս չէ սոցիալական կյանքի բոլոր հնարավոր դրսևորումների ազդեցությունների դաշտից: Մարդն անընդհատ ճնշվում է հոգսաշատ առօրյայի տիրույթներում և անընդհատ կենտրոնանում ներաշխարհի անհասկանալի վերլուծությունների ու անըմբռնելի եզրակացությունների վրա:

Ինքնասպանության գաղափարի և թեմայի տեսանկյունից հատկանշական ընդհանրություններ ենք նկատել Նար-Դոսի «Աննա Սարոյան» նամակագրական վիպակի և Ֆ. Դոստոևսկու «Երկու ինքնասպանություն»[10] էսսեի միջև: Թեև հայ և ռուս հեղինակների հերոսուհիների ինքնասպանության ակունքները տարաբևեռ են, այդուհանդերձ դրանք գալիս և զուգակշռվում են Դոստոևսկու՝ *«ապրելու անհնարինության»* գաղափարով:

Աննա Սարոյանն ամեն ճիգ գործադրում է ինքնասպան լինելու աղոտ մտքից ազատվելու համար, որովհետև չէր ուզում մեղանչել իր անձի և, իհարկե, ընտանեկան հարկի առաջ: Սակայն *«անհասկանալի զորությամբ»* նա ինքնասպան է լինում: Արդյոք սոցիո՞ւմն էր մեղավոր, թե՞ կյանքի նկատմամբ ունեցած փիլիսոփայական ընկալումները՝ դժվար է ասել: Կյանքը մարդուն տարել է փորձության, իսկ վերջինս չի դիմացել դրան: Պայքարի մեջ կարևորն ու առաջնայինը բնավ հաղթելը չէ, այլ չպարտվելը: Կյանքը, դնելով իր ուղղորդիչ նշանները, շարունակաբար կոտրում է կամային թույլ որակներով օժտված մարդուն:

---

[10] Տե՛ս **Достоевский Ф.**, Полное собрание сочинений в тридцати томах, Публицистика и письма, Тома XVIII-XXX, Том Двадцать третий, Дневник писателя за 1876 год, Май-октябрь, Ленинград, Издательство «Наука», Ленинградское отделение, 1981, стр. 144-146.

3.2. ԱՆՀԱՏԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ, ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ՆԱՐ-ԴՈՍԻ «ՊԱՅՔԱՐ» ՎԵՊՈՒՄ

Ատենախոսության այս ենթաբաժնում անդրադարձել ենք Նար-Դոսի «Պայքար» վեպին, որը դիտարկել ենք Ֆրիդրիխ Նիցշեի[11] և Օսվալդ Շպենգլերի[12] փիլիսոփայական հայացքների համապատկերում: Վեպի հերոսները գտնվում են ոչ միայն անցյալից ժառանգություն ստացած սոցիումի վերարժեքավորման, այլև հընթացս ձևավորվող աշխարհընկալման բախումների դաշտում: Հեղինակը գաղափարական հակոտնյա հոսանքների պայքարի հարթության վրա քննության է ենթարկում հերոսների փոխհարաբերությունները, ներաշխարհային զարգացումները և ներքին պայքարը:

Մանեն և Հեղինեն մտերիմ ընկերուհիներ են: Ամբողջացնելով կերպարների արտաքին բնութագիրը՝ Նար-Դոսն անցնում է նրանց հասարակական կողմնորոշումների վերլուծությանը: Մանեն պահպանողական հակվածություն ունի, իսկ Հեղինեն՝ ազատամտության:

Մանեի և Աշոտ Բաղամյանի միջև առաջացած դառնաղետ սիրո պատմությունն ու դրամատիկ հարաբերությունների ընթացքն ունեն հակոտնյա գաղափարների և կենսահոգեբանության խորհուրդը. կինը պահպանողական քրիստոնյա է, իսկ տղամարդը՝ ազատամիտ հեթանոս: Նար-Դոսի համար պակաս կարևոր է դառնում, թե ինչպես է այդ սերն առաջացել: Նրա գրական ծրագրի համար առաջնային է ստեղծված իրավիճակի զարգացումը և դրա արձագանքը անհատի ներաշխարհում: Հեղինակը կին-տղամարդ փոխհարաբերություններում նկատում է հոգեբանությունների զարգացման ընթացքը, ինչն էլ նրա իրապաշտության կարևոր հատկանիշներից մեկն է, գուցե նաև առավելությունը: Կատարելով իրար ժխտող հարաբերությունների քննություն՝ հեղինակը Մանեի և Բաղամյանի միջև ծավալված բանավեճը տանում է ոչ թե տեսակների հաշտեցման ճանապարհով, որը կարող էր մոտեցնել կամ հեռացնել նրանց, այլ ցույց է տալիս կողմերից յուրաքանչյուրի դիրքորոշման ճշմարտացիությունը:

Համլետյան մենախոսության միջոցով ինքնաբացահայտվում է Մանեի ամուսինը՝ Գրիգոր Սերգեյիչ Սանթրոսյանը: Ի հայտ են գալիս բնավորության այնպիսի ենթաշերտեր, որոնք ավելի են ամրապնդում նրա և Մանեի հոգեբանական անհամապատասխանությունը, ինչ-որ տեղ նաև խորթությունը: Թեկուզև Բաղամյանն էլ չլիներ, միևնույն է, ամուսինները ոչ մի ընդհանուր գաղափար չունեին կյանքի հանդեպ: Երեխա չունենալու հանգամանքը ավելի էր խորացնում իրենց

---

[11] Տե՛ս **Նիցշե Ֆ.**, Այսպես խոսեց Զրադաշտը, Գիրք ամենքի և ոչ ոքի համար, գերմ. թարգ.՝ Մովսես Հ., Երևան, Իրանագիտական կովկասյան կենտրոն, 2008, 560 էջ:

[12] Տե՛ս **Шпенглер О.**, Закат Европы, в 2 т., Очерки морфологии миравой истории т. 1, Образ и действительность пер. с нем И. И. Маханькова, Москва, Айрис пресс, 2004, 528 с.

միջև գոյացող անդունդը: Սանթրոսյանը տարված էր իր հանքերի գործերով, իսկ Մանեն՝ ձգտում էր երջանկության: Ամուսինները միմյանց հանդիպում են Մանեի ինքնասպանությունից ժամեր առաջ: Կինը, առաջնորդվելով իր բարոյահոգեբանության անխառն որակներով, և ականջալուր լինելով խղճի ձայնին, զոհաբերում է երիտասարդ կյանքը: Հին բարքերի կործանումը, նորերի անխոստումնալից զարգացումը, ամուսնու քողարկված գործունեությունը և Բադամյանի անսպասելի մահն ուղղակի անհամատեղելի էին Մանեի վեհ էությանը:

3.3. ԿՅԱՆՔԻ ԵՎ ՄԱՀՎԱՆ ԻՄԱՑԱԲԱՆԱԿԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ «ՄԱՀԸ» ՎԵՊՈՒՄ

Ատենախոսության եզրափակիչ ենթագլխում ուսումնասիրել ենք Նար-Դոսի «Մահը» վեպը: Հայ վիպագրության մեջ Շոպենհաուերի հոռետեսական փիլիսոփայության ընկալման և վերարտադրման ինքնատիպ գեղարվեստականացում է «Մահը» վեպը: Հեղինակը այս վեպում ազգային-հասարակական և սոցիալ-կենցաղային իրողությունների միջոցով հայ գրականություն է ներմուծում մետաֆիզիկական փիլիսոփայության ենթատեքստ, որը հատկանշվում է կյանքի ու մահվան նկատմամբ ունեցած լավատեսության և հոռետեսության զուգահեռներով:

«Մահը» վեպի գլխավոր հերոսի՝ Լևոն Շահյանի կերպարն ընկալելի է դառնում Շոպենհաուերի հոռետեսական փիլիսոփայության համատեքստում[13]: Ներզգայող անհատի միտքը թևածում է կյանքի և մահվան եզրագծում: Այս կերպարը վեպի հենց սկզբից առանց ավելորդաբանության զարգանում է վայելքի բացասականության և անհասանելի երջանկության ուղեծրով: Հերոսն արդեն դատապարտված է մենության, որովհետև մարդիկ տարակուսանքով են վերաբերվում վերացարկված մտածողությամբ հատկանշվող այս երիտասարդին:

Շահյանը ինքնաբացահայտվում է իր իսկ կատարած քայլերով: Պահանջմունքների բավարարումն ու նպատակակետին հասնելը Շահյանին երջանիկ չեն դարձնում, ընդհակառակը, նա հայտնվում է ծանձրույթի և տաղտուկի աշխարհում, մտածում է սոսկ *«ժամանակ սպանելու»* մասին:

Հայտնի է, որ Նար-Դոսն ուշադրությամբ հետևում էր ռուս գրականության ավանդներին և ժամանակակից զարգացումներին: Դրանք իրենց ինքնատիպությամբ յուրովի էին ազդում նրա ստեղծագործությունների վրա՝ շատ դեպքերում ի հայտ բերելով համանման բնավորությունների հստակ դրսևորումներ (Ի. Ա. Գոնչարով, «Օբլոմով»): Ուսումնասիրության ընթացքում նկատվել է նաև այն, որ Նար-Դոսի «Մահը»* վեպը իր ուրույն ազդեցությունն է թողել ֆրանսալեզու

---

[13] Տե՛ս **Шопенгауэр А.,** Две основные проблемы этики, Полн. собр. соч., т. 4, Москва, Издание Д. П. Ефимова, 1910, 689 с.

* Ուշարժան է, որ Նար-Դոսի «Պայքար» և «Մահը» վեպերի հայերեն բնագրերը հետաքրքրել են նաև սփյուռքահայ գրող Վազգեն Շուշանյանին (1903–1941): Վերջինիս «Սիրոյ

գրող Անրի Թրուայայի (1911-2007) «Սարդը»[14] (1938) վեպի գաղափարական ենթաշերտերում[15]: Առաջնայինն այստեղ, սակայն, գրական այն առնչություններն են, որոնք երկխոսության հնարավորություններ են ստեղծում արյունակից այս երկու գրողների ստեղծագործությունների համար:

«Մահը» վեպում ներկայացված չէ Շահյանի անձնասպանության տեսարանը: Միայն վեպի վերջում հեղինակը մի փոքր հատվածով ամբողջացնում է իր հոռետես հերոսի հուղարկավորությունը: Խնդիրը պայմանավորված է ոչ թե հեղինակի վարպետությամբ, այլ նրա ստեղծագործության խորհրդավորությամբ. Նար-Դոսը հնարավորություն է տալիս, որ գրասեր հասարակությունն ինքը մտորի փիլիսոփայության գեղարվեստական արծարծումների մասին: Արտաքուստ թվում է՝ ամեն ինչ իր բնականոն ընթացքի մեջ է. բոլորն իրենց վերջին հրաժեշտն են տալիս հանգուցյալին: Սակայն համատարած այդ ողբերգության համապատկերում Եվան ակամա նկատում է հանգուցյալի բազմանշանակ *«հեգնական»* ժպիտը, որը հաստատում է Շահյանի վերջին նամակի՝ մահվան ետևից գնալու եզրափակիչ միտքը:

Շահյանը վախճանվում է: Նրանից առաջ *«թրքական ահարկու բանտի մեջ»* իր մահկանացուն էր կնքել Արմենակը, իսկ վերջինիս մահվան լուրը գուժող թերթը դիմակազերծ է անում Բազենյանին. տեղի է ունենում Բազենյանի բարոյական մահը: Նար-Դոսն իր այս վեպում փորձում է հավասարակշռել հիշյալ երեք «մահերի» կենսափիլիսոփայական խորհուրդը: Սակայն այդ հավասարությունը չի ստացվում: Պատճառն ըստ էության այն է, որ վեպում Շահյանը ներկայացվում է փիլիսոփայական հզոր որակներով, Բազենյանը՝ բազմկողմանի, ամբողջական և հաջողված նկարագրով, իսկ ինչ վերաբերում է Արմենակին, ապա նրա կերպարը մնացել է անկատար, ստվերային ու չստացված:

եւ արկածի տղաքը» վեպի հերոսը՝ Երվանդը, թիֆլիսյան դեգերումների օրերին արտասուքն աչքերին, հուզմունքից խեղդված և դողահար դրության մեջ է ավարտում «Մահը» վեպի ընթերցումը, իսկ «Պայքարը»՝ անձկությամբ և անգութ ցավով է կարդում և երբ ավարտում է վեպը, թախծորեն խոստովանում է, որ ինքը սիրում է այն գրքերը, որոնք վերջանում են *«դիխուր ու եղերական խորքի մը վրայ, ինչպէս գրեթէ բոլոր մեր հաճոյքի օրերը»*: Տե՛ս **Շուշանեան Վ.**, Սիրոյ եւ արկածի տղաքը, Պէյրութ, Վահէ Սէթեան տպարան, 2012, էջ 42, 56, 67:

[14] Տե՛ս **Թրուայա Ա.**, Սարդը, ֆրանս. թարգ.՝ Շահբազյան Պ., Երևան, 2009, 188 էջ:

[15] Այս մասին ավելի մանրամասն տե՛ս **Դանիէլեան Ս.**, Միջուկի տրոհումը, Սփիւռքահայ գրականութեան պատմութիւն, Գիրք 1, Ներածութիւն, Երևան, 2011, էջ 300-310: Տե՛ս նաև **Դանիէլեան Ս.**, Նար-Դոս եւ Անրի Թրուայա. կերպարների տիպաբանական ընդհանրութեան դրուագներ // «Հայ-ֆրանսիական գրապատմական առընչութիւններ» գիտական նստաշրջան (Երևան, 1 Նոյեմբերի, 2018), Երևան, ԱՄՎ-Պրինտ, 2019, էջ 4-14:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պատմահամեմատական, վերլուծական, համադրական մեթոդների միասնական տրամաբանությամբ և արդիական դիտարկումների կիրառությամբ առաջադրված հիմնախնդրի ուսումնասիրության ընթացքում եկել ենք հետևյալ եզրակացությունների.

1. Նար-Դոսը մարդու հոգեբանության մեջ կատարվող անտեսանելի, բայց բեկումնային փոփոխությունների ամփոփ գեղարվեստականացմամբ շարունակում է մնալ արդիական հեղինակ: Գեղագետ-հոգեբանը նկատել է, որ 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հին ու նոր կացութաձևերի փոխատեղման տիրույթում մարդու հոգեբանության մեջ տեղի են ունենում զարմանալի երևույթներ: «Ինչպես բժշկեցին» և «Սաքուլն ուխտ գնաց» նորավեպերի զուգահեռ դիտարկումները մեկ ընդհանուր հատկանիշի՝ սնահավատության ուղեծրով, ակնհայտ են դարձնում, որ Նար-Դոսի ընկալումների համաձայն՝ հին կացութաձևը, այնուամենայնիվ, իր կնիքը թողնում է մարդու և նրա հուզաշխարհի ձևավորման ընթացքի վրա:

2. «Հոպոպ», «Թե ինչ եղավ հետո...», «Ադամամութին» նորավեպերում յուրօրինակ ընդհանրացում են ստացել մարդու բարոյական նկարագիրը, կենսաձևը, ինչպես նաև թշվառության մեջ բեկվող մարդկային ճակատագիրն ու հոգեբանությունը: Մարդասպանության և դրա հոգեբանական ընկալումների վերաբերյալ դրսևորելով բազմաբնույթ ու համարձակ մոտեցումներ՝ Նար-Դոսը երբեք՝ իրարից տարբեր նորավեպերում կատարում է տեսակի մեջ եզակի դիտարկումներ և մեկնաբանություններ:

3. Նար-Դոսը սոցիալական կյանքի անբարենպաստ պայմանների ներկայացման միջոցով ուղղակիորեն մատնանշում է մարդու բարոյականության ողբերգական անկումները, որոնք իսպառ կամ գրեթե դուրս են արտաքին գործոնների ազդեցությունների դաշտից: Այլ նորավեպերի հետ տիպաբանական զուգահեռների արդյունքում նկատելի է, որ գրողն ավելի շատ տվել է դիպուկ ու ստեղծիչ նկարագրություններ և համեմատություններ, որոնք ընդգրկուն բովանդակությամբ ավելի համակողմանի ու խորքային են դարձնում արծարծվող նյութը:

4. «Հոգուն վրա հասավ» և «Սև փողերի տոկոսը» նորավեպերի զուգահեռ դիտարկումները՝ բարոյահոգեբանական որակների անկման ուղեծրով, ակնհայտ են դարձնում, որ մարդու հոգեբանության և սոցիալական կյանքի փոխհարաբերության քննությունը Նար-Դոսի գրչի տակ ստանում է որոշակի ոճավորում: Իրարից տարբեր այս իրողությունների հիմքում տեսնում ենք մարդկային վարքագծի շատ ընդհանուր եզրեր:

5. Վերլուծելով կյանքի հակասական կողմերը, մարդկային հոգեկերտվածքն և վարքագիծը՝ Նար-Դոսը «Սպանված աղավնին» վիպակում նկատել է, որ ժամանակակից մարդը ձեռք է բերում բարոյական մեկ այլ նկարագիր, որն

ավելի պարզորոշ երևում է կին-տղամարդ փոխհարաբերության դրսևորման կերպերում: Սիրո հավերժական թեման այս արձակագրի գրչի տակ արտացոլվում է մարդու ինքնության և հասարակության պարտադրած հարաբերությունների բախումների մակարդակներում:

6. Նար-Դոսի «Աննա Սարոյան» նամակագրական վիպակը թեև գտնվում է միջժանրային տիրույթում, սակայն իր գրական-պատմական արժեքով և հոգեբանական անցումների իմաստով կարևոր տեղ է զբաղեցնում հայ գրականության մեջ: Նար-Դոսի «Աննա Սարոյանը» իր առավելություններով և թերություններով հանդերձ բացառիկ քննության է ենթարկում տարաբնույթ ազդեցությունների խաչմերուկում հայտնված մարդու հոգեբանությունը և կամային հատկանիշները: Ստեղծագործության հոգեբանական խորքայնությունը, ինչպես նաև անցումները տեսանելի և քննելի են Շոպենհաուերի փիլիսոփայության համակարգում: Այն գալիս է հաստատելու, որ անկախ արտաքին հանգամանքների ազդեցություններից՝ մարդու հոգեբանության մեջ տեղի են ունենում զարմանալի երևույթներ:

7. Վիպակի տարաբնույթ դիտարկումները անձնասպանության փիլիսոփայական դիտակետով ակնհայտ են դարձնում, որ Նար-Դոսը գիտական որոշակի ոճավորմամբ է ուսումնասիրել մարդու հոգեբանական զարգացումները: Ներաշխարհի անհասկանալի վերլուծությունները մարդուն մեկուսացնում են հոգսաշատ առօրյայի տիրույթներից: Ըստ հեղինակի՝ սոցիալական հեղաբեկումները ներգործում են մարդու ոչ թե հոգեբանության, այլ վարքաբանության վրա: Կամային թույլ որակներ և անհեռանկար կենսաձև ունեցող մարդիկ անխնա կործանվում են կյանքի փորձության ճանապարհին:

8. «Պայքար» վեպը յուրովի իմաստավորեց կենսական, գաղափարագեղարվեստական բարդ և ներհակ այն մաքառումները, որոնք, լինելով խիստ արդիական բոլոր ժամանակների համար, իրենց անմիջական ազդեցություններն են թողնում անհատի ներաշխարհային զարգացումների և հասարակական դատողությունների վրա:

9. «Պայքար» վեպի նախնական չորս տարբերակների բնագրային ուսումնասիրությունները փաստում են, որ Նար-Դոսն իր այս երկի գաղափարաբովանդակային և պատումային նոր ուղիների որոնման ճանապարհին ավելի ընդգծված երանգներ է հաղորդել անհատի ինքնաճանաչողության և ինքնամաքրման խնդիրներին, ինչպես նաև հասարակության փոխհարաբերություններին:

10. Վիպական կառույցում ներդաշնակ միասնություն են կազմում ազգային կենցաղը, խոհերը, կնոջ ազատության և իրավահավասարության մասին առաջադրված հիմնահարցերը: Սիրո, երջանկության, բանականության, խղճի և ընտանեկան հարկի առջև բարոյական պարտականությունների նարդոսյան ընկալումները ուղենշային են մարդու գոյության ընթացքում:

11. Էապես տարբերվելով հայ վիպասանության նախընթաց ավանդներից՝ Նար-Դոսի «Մահը» վեպն իր կենսաճանաչողության լայն ընդգրկմամբ գեղարվեստական հարթության վրա շոշափում է կյանքի և մահվան առեղծվածի փիլիսոփայական մեկնաբանության իրողություններ, որոնք արագընթաց ժամանակների բովում չեն կորցնում իրենց արդիական նշանակությունը: Հոգեդետ գրողը նրբորեն նկատել է փիլիսոփայական տարաբնույթ ազդեցությունների տիրույթում գտնվող մարդու ներաշխարհային ալեկոծումները, հեղաբեկումները և կամքի դրսևորման կերպերը:

12. Վեպի բազմապլան դիտարկումներն անձնասպանության փիլիսոփայական հայեցակարգով փաստում են, որ Նար-Դոսի այս լայնակտավ երկը հայ վիպագրության համապատկերում յուրովի է իմաստավորում թե՛ ֆիզիկական և թե՛ բարոյական մահվան փիլիսոփայությունը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԵՆ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ.

1. **Մերջանյան Տ.,** «Կյանքի ու մահվան ընկալումները Նար-Դոսի «Ինչպես բժշկեցին» և «Սաքուլն ուխտ գնաց» նորավեպերում» // «Հայագիտական հանդես», ամսագիր, թիվ 3 (37), Երևան, 2017, էջ 70-79:

2. **Մերջանյան Տ.,** «Բարոյական անկման նարդոսյան ընկալումները («Հոպոպ», «Թե ի՞նչ եղավ հետո...», «Ադամամութին»)» // «Հայագիտական հանդես», ամսագիր, թիվ 4 (38), Երևան, 2017, էջ 99-113:

3. **Մերջանյան Տ.,** «Բարոյահոգեբանական անկման ընդհանրությունները Նար-Դոսի «Հոգուն վրա հասավ» և «Սև փողերի տոկոսը» նորավեպերում» // «Հայագիտական հանդես», ամսագիր, թիվ 1 (39), Երևան, 2018, էջ 67-75:

4. **Մերջանյան Տ.,** «Սիրո փիլիսոփայական և հոգեբանական դրսևորումները Նար-Դոսի «Սպանված աղավնին» վիպակում» // «Հայագիտության հարցեր», հանդես, թիվ 2 (14), Երևան, 2018, էջ 146-162:

5. **Մերջանյան Տ.,** «Անձնասպանության փիլիսոփայական ինքնագիտակցումը Նար-Դոսի «Աննա Սարոյան» նամակագրական վիպակում» // «Վէմ», համահայկական հանդես, ապրիլ-հունիս, թիվ 2 (62), Երևան, 2018, էջ 92-104:

6. **Մերջանյան Տ.,** «Անհատի գաղափարական և հոգեբանական զարգացումները Նար-Դոսի «Պայքար» վեպում» // «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», հանդես, 1 (28), Երևան, 2019, էջ 25-38:

7. **Մերջանյան Տ.,** Կյանքի և մահվան իմացաբանական ակունքները Նար-Դոսի «Մահը» վեպում // «Հայագիտության հարցեր», հանդես, 2 (17), Երևան, 2019, էջ 149-164:

МЕРДЖАНЯН ТАТЕВИК АЙКОВНА

ПРОБЛЕМА ЖИЗНИ И СМЕРТИ В ПРОИЗВЕДЕНИЯХ НАР-ДОСА

Защита диссертации на соискание ученой степени кандидата филологических наук состоится 22-го января 2020 года в 14:30 на заседании специализированного совета 012 ВАК («Армянская классическая литература»), действующего в Ереванском государственном университете, по адресу 0025, г. Ереван, ул. Х. Абовяна 52а (восьмой корпус ЕГУ, факультет армянской филологии, аудитория 202).

РЕЗЮМЕ

Актуальность темы

В последние годы в современном мире и особенно в Армении резко возросло число отчаявшихся людей и самоубийц, и в свете этого весьма актуальной становится проблема жизни и смерти, отраженная в произведениях Нар-Доса. Современный человек впадает в отчаяние от любой незначительной проблемы, а выход из создавшегося положения находит в самоубийстве. В связи с этим мы выдвигаем жесткое требование о возвращении к всеармянскому культурному достоинству, вопрос первоочередности которого лежит в основе настоящего исследования.

Цели и задачи исследования

Целью нашего исследования является изучение произведений Нар-Доса в древнегреческом и австро-немецком (19-20вв.) философском и морально-психологическом контексте. Жизнь и смерть человека он рассматривает на одной плоскости. В этом смысле основные задачи исследования сводятся к четкому утверждению жизненности в соотношении «жизнь – смерть».

Научная новизна диссертации

Вовсе не принижая упомянутые достижения в нардосоведении и не претендуя на высказывание исчерпывающего мнения о вечно актуальных произведениях автора, в настоящей диссертации мы попытались рассмотреть, проанализировать и оценить произведения Нар-Доса в свете философской концепции жизни и смерти (Эпикур, Платон, Артур Шопенгауэр, Фридрих Ницше), столь актуальной для нашего времени, что и обеспечивает научную новизну данной работы.

Методология работы

Исследование проводилось с учетом логических и современных наблюдений. Применение сравнительно-исторического, аналитического и сопоставительного методов позволило выявить нравственно-психологическую и жизненно-

философскую концепции произведений Нар-Доса. Было замечено, что философская мысль 19-20-х вв., получившая своеобразное проявление в творчестве Нар-Доса, имеет большое значение для современного восприятия.

Структура диссертации

Работа состоит из введения, трех глав, заключения, списка литературы, в котором отражены источники, периодика и архивы.

Во введении представлен тот литературно-исторический период, в течение которого Нар-Дос ступил на литературное поприще. Отдавая должное предшествующим исследователям, изучавшим данный материал, мы коротко изложили историю вопроса, выделили научную новизну, обосновали цели, задачи и актуальность исследования.

В первой главе («Нардосовское восприятие жизни и смерти в цикле новелл «Наш околоток»»), включающей две подглавы, в контексте философии А. Шопенгауэра и психоанализа З. Фрейда мы выделили особенности нардосовского восприятия жизни и смерти.

Во второй главе («Любовь на границе жизни и смерти») с точки зрения трехкомпонентной теории любви, философии и психоанализа мы исследовали развернутые в повести «Убитый голубь» взаимоотношения женщины и мужчины, причины ряда перемен в психологии женщины.

В третьей главе («Философская концепция самоубийства в произведениях Нар-Доса»), состоящей из трех логических подглав, представлена философская концепция самоубийства в широкомасштабных произведениях Нар-Доса, идеологическая борьба и ее отражение на внутренний мир личности, а также придание художественности нравственно-психологическому описанию человека («Анна Сароян», «Борьба», «Смерть»).

В заключении обобщены основные результаты научного исследования.

Объем диссертации составляет 145 страниц.

TATEVIK MERJANYAN

THE ISSUE OF LIFE AND DEATH IN THE WORKS BY NAR-DOS

The defense of the thesis will take place on January 22, 2020 at 14:30 at the HQC of RA 's specialized council 012 of "Armenian Classical Literature" in Yerevan State University (address: 0025, Yerevan, Abovyan st. 52/A, YSU, 8th building, Faculty of Armenian Philology, room 202)

SUMMARY

The modernity of the theme: Recently in modern world and especially in the Republic of Armenia the number of depressed and the ones committing suicide has drastically grown, so the issue of life and death which is present in the works by Nar-Dos has become strictly up-to date. The modern man is in panic at the sight of any tiny event and seems to see the solution of overcoming the desperate reality in committing suicide. **That is why we have the imperative demand of bringing back the pan-Armenian cultural dignity the priority of which is the study of the issue put forward in the given research.**

The aims and problems of the research: The aim of the given issue is to study the works by Nar-Dos in the context of Ancient Greece and the 19-20 century Austria- German philosophy and moral-psychology. He observes the life and death on the same plane. From this perspective the main problems of the research refer to clearly underlined **vitality** of relation between life–death.

The scientific novelty of the thesis: Without casting any shadow on aforementioned achievements in the field of studying Nar-Dos's works and not claiming to have the final word on the author's always modern works we've tried in this thesis to observe, analyze and re-evaluate the concept of philosophy on life and death (Epicure, Plato, Arthur Schopenhauer, Friedrich Nietzsche, Oswald Spengler), which is very dear to our times and thus guarantees the scientific novelty.

The methodology of the work: The research is carried out by the combined realization of logical and chronological observations. By revealing in this work the moral-psychological and vital-philosophical context of the works by Nar-Dos through the usage of historical-comparative, analyzing and comparative methods we've noticed that the 19-20 century philosophical mind has gained a peculiar expression in those literary works and has significant meaning for the perception of those works in up-to date life.

The structure of the thesis: The work consists of introduction, three chapters with their corresponding subchapters, conclusions and bibliography which states the sources of the used literature, periodicals and archives.

In **Introduction** we've presented the literary-historical period during which Nar-Dos came to literary field. By evaluating nearly all the previous studies we've composed in brief the history of the issue and underlined the scientific novelty of the thesis. By explaining the aims and problems of the research we've justified the modernity of the thesis.

In the first chapter ("The Perceptions of Life and Death by Nar- Dos in the Series of Novelette "Our District" ") that is divided into three subchapters we've emphasized the peculiarities of perceptions of life and death by Nar- Dos in the series of novelette "Our District" in the context of A. Schopenhauer's philosophy and Z. Freud's psychoanalysis.

In the second chapter ("Love at the Demarcation of Life and Death") we've observed the man and woman relationship, the reasons of changes taking place in woman's psychology in the novel "The Killed Dove" from the perspective of philosophy, psychoanalysis and the eternal triangular theory of love.

In the third chapter ("The Philosophical Concept of Suicide in the Works by Nar-Dos") that is divided into three subchapters we've presented the philosophical concept of suicide expressed in the expanded works by Nar-Dos, ideological struggle and its reflections in an individual's inner world, as well as, the artistication of moral-psychological depiction of a man ("Anna Saroyan", "Struggle" , "The Death").

In the section of **Conclusions** we've summarized all main and essential results that have been generalized during the scientific research due to modern attitudes.

The total volume of the thesis comprises 145 pages.